ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ

Վերջապէս երկար մտատանջութիւններ, կասկածներ և անհանգիստ օրեր անցնելուց յետոյ, այսօր մեր կրծքին ծանրացած քարը գլորուեցաւ, և մենք կարողենք ազատ շունչ քաշել։ Հայաստանեայց ազգաւոր եկեղեցին այսօր ունենում է իր արժանաւոր Պետը, ս. Գրիգոր Լուսաւորչի թափուր Գահը՝ իր ընտրելագոյն Գահակալը։

Տէր Մատթէոս Բ. Կաթուղիկոսը կարճ ժամանակից յետոյ կստանձնի եկեղեցական ազգային գործերի ղեկը և հէնց առաջին իսկ օրից նա պէտք է ամենաբուռն լարուածութեամբ աշխատի վերականգնել այն, ինչ որ տասնեակ տարիների ընթացքում զարտուղի ճանապարհներով գնալով խախտուել, քայքայուել, կործանուել է, ինչ որ երկար տարիների ընթացքում կարող կամքի, հզօր վճռականութեան բացակայութեան շնորհիւ դարձել է քաոս։

Եկեղեցուն կից հոգևոր և դպրոցական հաստատութիւնները անդեկ նաւի նման տարուբերուելով կեանքի յեղյեղուկ կոհակների մէջ, կորցրած իրանց իսկական ուղին, թափառում են անեղը ծովի վրա և անկարող լինում հասնել իրանց նպատակին։

Ոչ մի Կաթուղիկոս կանգնած չի եղել այնպիսի առեղծուածների առաջ, ինչպիսիք այսօր երևան են եկել և որոնք հրամայական պահանջով լուծումն ու բացատրութիւն են սպասում։ Ոչ մի ժամանակ մտքերի, հասկացողութեան, ուղղութիւնների այնպիսի սուր բախումներ չեն եղել, որպիսիք ներկայումս ցցուած են մեր առաջ և կոչնական Պետից, ս. Էջմիածնի Գահակալից, որ ղեկավար, կառավարիչ ու պատասխանատու աձնէ, սպասում են բարարարութեան։

Ո՞րքան հեռատեսութիւն, որքան աչալրջութիւն, ի՞նչ անխոնջ աշխատանք ու պարապմունք է պէտք և որպիսի մեծ հաստատակամութիւն ու վճռականութիւն է պէտք, որպէսզի նոր գահ բարձրացած Հովուապետը առանց տա-

բուբերուելու այս կամ այն հասկացողութիւնների և ուղղութիւնների լաբիրինթոսում, կարողանայ ընտրել գործունէութեան իսկական ուղին և հարկադրել բոլորին գնալ այդ ուղղիով և որոշ կողապարի մէջ մտնել, որով միայն հնարաւոր է բարեկարգութիւն և կարգաւորումն։

Եւ Նորին Վեհափառութեան ընտրողները իրենց քէն տալու ժամանակ հաւատում էին, որ նա է միակ անձը, որ իր անբիծ պաշտօնավարութեամբ, անկեղծ հաստատակամութեամբ կարող պիտի լինի աղգի և եկեղեցու բաղձանքները կատարել։ Եւ այս լի հաւատով անձկանօք սպասում ենք Նորընտիր Հայրապետի գահակալութեան և վարչութեան ղեկը իր ձեռքն առնելուն։

Սակայն իշխանաւորը միակ ոչինչ չի կարող անել, եթէ չունի անկեղծ գործին նուիրուած պաշտօնեաներ։ Մեքենայի ուժը ոչքան և զօրաւոր լինի, չի կարող օգտակար գործառնութիւն ունենալ, եթէ նա միացած է մի գործիքի, որի անուները ջարդուած են կամ պակասաւոր։ Ամեն մի գեղեցիկ մտածմունք կմնայ իբրև ծրագիր, եթէ կեանքի մէջ գործադրող ձեռքեր չկան։

Անհրաժեշտ է հոգևորական և աշխարհական բոլոր գործի մարդիկ իրանց ուժը, եռանդը, պատրաստակամութիւնը դնեն Կաթուղիկոսի տրամադրութեան տակ և հեռու անձնական եռական ձգտումներից ընդհանուր բարեկեցութեան համար միախմբուեն և հասարակական բազմաթիւ ցաւերին դարման անեն։ Այսպիսով միայն Նորընտիր Կաթուղիկոսը կարող է իբրև ղեկավարող ուժ ցանկալի ընթացքի մէջ դնել հասարակական գործերը։